ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Դ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սովետական իշխանության հաստատումից հետո առաջին մեկ-երկու տասնամյակում փիլիսոփայության պրոբլեմների շուրջը գիտահետազոտական աշխատանքները կազմակերպված ու պարբերական բնույթ չէին կրում։ Այդ տարիներին հրատարակված՝ գերազանցապես փիլիսոփայական խնդիրներ արծարծող աշխատանքներից կարելի է հիշատակել Լ. Արիսյանի հոդվածները, որ նվիրված էին ճանաչողության տեսության և պատմական մատերիալիզմի այլևայլ հարցերի[1], Հ. Գաբրիելյանի աշխատանքները[2], Հ. Ասլանյանի փիլիսոփայության ձեռնարկը[3] և մի շարք հոդվածներ[4]։

Մինչև 1940-ական թթ. փիլիսոփայական մտքի կենտրոն էին բուհերին կից փիլիսոփայության և մարքսիզմ-լենինիզմի ամբիոնները, որոնք մեծ դեր կատարեցին փիլիսոփայական կադրեր պատրաստելու գործում։ Այդ տարիներին փիլիսոփայական գիտելիքների տարածման և կադրերի պատրաստման ասպարեզում զգալի աշխատանք է կատարել Հ. Գյուլիքեվխյանը։

Փիլիսոփայության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների աշխուժացում է նկատվում 1940-ական թթ.։ Մեծ նշանակություն ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը (1943), որն իր կազմում ուներ նաև փիլիսոփայության սեկտոր։ Հաստատությունը աստիճանաբար դարձավ փիլիսոփայական մտքի նշանակալից կենտրոն։ 1959 թ. փիլիսոփայության սեկտորում ստեղծվում է նաև իրավաբանության բաժին, որտեղ գիտահետազոտական աշխատանքներ են տարվում իրավունքի պրոբլեմների շուրջը և այն վերանվանվում է փիլիսոփայության և իրավունքի սեկտոր։ 1969 թ. հուլիսին սեկտորի հիմքի վրա ստեղծվում է Հայկական ՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ, որն ունի դիալեկտիկական մատերիալիզմի ու բնագիտության փիլիսոփայական հարցերի, պատմական մատերիալիզմի ու գիտական կոմունիզմի, փիլիսոփայության պատմության, էսթետիկայի, կոնկրետ սոցիալական հետազոտությունների և իրավունքի բաժիններ։ Անցած տարիների ընթացքում ակադեմիայի փիլիսոփայական հաստատությունը հրապարակել է 60-ից ավելի մենագրություններ ու ժողովածուներ։

Տարիների ընթացքում աճել են նաև բուհական ամբիոնները։ Այժմ փիլիսոփայության և գիտական կոմունիզմի ամբիոններ կան հանրապետության համարյա բոլոր բուհերում. դրանցից նշանավոր են հատկապես Երևանի պե-

---

1 Լ. Արիսյանի գործերի մի մասը ետմահու հրատարակվել է առանձին գրքով, տե՛ս Л. Арисян, Из истории теории познания, Ереван, 1957.

2 Հ. Գ. Գաբրիելյան, Հասարակության զարգացման օրինաչափությունները, Երևան, 1932։ Հեգելի զարգացման թեորիան և մարքսիզմ-լենինիզմը, Երևան, 1935։

3 Հ. Ասլանյան, Դիալեկտիկական մատերիալիզմ, Երևան, 1931։

4 Տե՛ս «Լենինյան ուղի», 1931, № 3—5 և 1933, № 1։

տական համալսարանում գործող ամբիոնները։ Փիլիսոփայական կադրեր պատրաստելու առումով լուրջ քայլ էր Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետին կից փիլիսոփայության բաժնի ստեղծումը 1964 թ.։

Այժմ հանրապետությունում աշխատում են փիլիսոփայական գիտությունների 15-ից ավելի դոկտորներ ու պրոֆեսորներ, շուրջ 100 թեկնածու։

* * *

Դիալեկտիկական մատերիալիզմի բնագավառում հայ փիլիսոփաների հետազոտություններից կարևոր են իմացության տեսության, դիալեկտիկայի և տրամաբանության պրոբլեմներին նվիրված աշխատանքները։

Իմացության տեսության վերաբերյալ հետաքրքիր և արժեքավոր մենագրություններ ու հոդվածներ է գրել Հ. Դևորգյանը։ Նա առանձին ուսումնասիրություններ է նվիրել իմացության մեջ վերացարկման (աբստրակցիայի) դերի ու նշանակության, գիտական կանխատեսման, գիտության մեջ հիպոթեզի դերի, հավանական և հավաստի գիտելիքի[5] պրոբլեմներին։

Իմացության պրոցեսի դիալեկտիկայի բացահայտմանն են նվիրված Դ. Բրուտյանի[6], Գ. Վարդանյանի[7] աշխատանքները։ Հիմնականում նույն հարցերն են արծարծվում Ղ. Վարդապետյանի գրքում[8]։ Իմացաբանական հարցեր են քննվում նաև Հ. Շաքարյանի աշխատանքում[9]։ Ճանաչողության զգայական աստիճանի հետ կապված հարցերը հետազոտության առարկա են դարձել Տ. Պ. Ալեքսանյանի աշխատանքում[10], որտեղ շարադրվում են հատկապես զգայության և ընկալման հետ կապված հարցեր։

Իմացության տեսության պրոբլեմների մշակման հետ միաժամանակ հայ փիլիսոփաները քննադատել են բնության և հասարակության էության անճանաչելիության վերաբերյալ տարբեր կոնցեպցիաներ։ Ագնոստիցիզմի և սկեպտիցիզմի քննադատությանն է նվիրված Ղ. Վարդապետյանի աշխատանքը[11], որտեղ հատուկ տեղ է գրավում հասարակական երևույթների անճանաչելիության վերաբերյալ բուրժուական ուսմունքների քննադատությունը, ցույց է տրվում դրանց ռեակցիոն էությունը։ Ագնոստիցիզմի էությունն ու բնույթը բացահայտվում է նաև Ա. Եկմալյանի ուսումնասիրության մեջ[12]։

Ուշագրավ աշխատանք է Հ. Գաբրիելյանի «Մարքսիստական տրամաբանությունը որպես դիալեկտիկա և իմացության տեսություն»[13] գիրքը, որտեղ դիալեկտիկական տրամաբանությունը դիտվում է ոչ միայն որպես սուբյեկ-

---

5 Г. А. Геворкян, О роли абстракции в познании, Ереван, 1957. *Նույնի՝ Ինչ է գիտական կանխատեսումը, Երևան, 1957։ Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ, Երևան, 1959։* Вероятное и достоверное знание, Ереван, 1965.

6 *Գ. Ա. Բրուտյան, Իմացության պրոցեսի դիալեկտիկան, Երևան, 1959։*

7 Г. М. Вартанян, Диалектика процесса познания, Ереван, 1959.

8 *Ղ. Բ. Վարդապետյան, Արտացոլման մարքսիստական-լենինյան թեորիայի հարցերը, Երևան, 1958։*

9 *Հ. Գ. Շաքարյան, Ողջախոհության տեղը իմացության պրոցեսում, Երևան, 1965։*

10 *Տ. Պ. Ալեքսանյան, Պրակտիկայի դերը իմացության մեջ, Երևան, 1959։*

11 *Ղ. Բ. Վարդապետյան, Ագնոստիցիզմի և սկեպտիցիզմի քննադատությունը, Երևան, 1956։*

12 А. М. Экмалян, Агностицизм и примирение знания и веры в буржуазной философии, Ереван, 1964.

13 Г. Г. Габриелян, Марксистская логика как диалектика и теория познания, Ереван, 1963.

տիվ տրամաբանություն, որի ուսումնասիրության առարկա են միայն մտածողության ձևերը, այլև որպես օբյեկտիվ տրամաբանություն, որն իր մեջ է ներառնում նաև մատերիալիստական դիալեկտիկայի կատեգորիաների սիստեմը։ Գ. Բրուտյանը հանդես է եկել «բազմաթիվ տրամաբանություններ» (պոլիլոգիկա) կոնցեպցիայի պաշտպանությամբ, որն ամփոփում է տրամաբանական ուսմունքների դասակարգումը։

Ձևական տրամաբանության ուսումնասիրության տեսակետից կարևոր է Գ. Բրուտյանի «Տրամաբանություն» հայերեն լեզվով առաջին ուսումնական ձեռնարկը[14]։ Բրուտյանը հրապարակել է նաև «Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածություն»[15] հետազոտությունը, որտեղ նշանակալի տեղ է հատկացված մաթեմատիկական, ձևական և դիալեկտիկական տրամաբանության փոխհարաբերության հարցերին։ Մաթեմատիկական տրամաբանության շուրջը աշխատություն է հրապարակել նաև Ս. Ավետիսյանը[16]։

Լուսաբանվել են նաև լեզվի ու մտածողության պրոբլեմները։ Լեզվի վերաբերյալ սեմանտիկական փիլիսոփայության սկզբունքների քննական վերլուծությանն են նվիրված Գ. Բրուտյանի երկու մենագրությունները[17]։

Լեզվի նշանների տեսության, ինչպես և նշանների ընդհանուր տեսության (որի տակ հասկացվում է սեմիոտիկան) ծավալուն շարադրանք է Լ. Աբրահամյանի ուսումնասիրությունը[18], որում կենտրոնական տեղ է գրավում լեզվական նշանի և նրա նշանակության հարցը։

Հանրապետության փիլիսոփաները ծավալուն աշխատանքներով և մի շարք բրոշյուրներով անդրադարձել են դիալեկտիկայի օրենքների և կատեգորիաների շարադրմանն ու լուսաբանությանը[19]։ Առանձին ուսումնասիրություն է հրապարակվել՝ նվիրված սոֆիստիկայի էության բացահայտմանն ու քննադատությանը[20]։ Լույս է տեսել «Գիտական իմացության տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցեր» ժողովածուի առաջին պրակը, որտեղ զետեղված հոդվածներում քննարկվում են իմացաբանական այն հարցերը, որոնք անխուսափելիորեն ասպարեզ են գալիս գիտական իմացության տրամաբանական վերլուծության կապակցությամբ, մասնավորապես՝ գիտելիքների տրամաբանական տեսության առնչությամբ[21]։

---

14 Գ. Ա. Բրուտյան, Տրամաբանություն, Երևան, 1957։ Ձևական տրամաբանության դասագիրք, Երևան, 1967։

15 Գ. Ա. Բրուտյան, Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածություն, Երևան, 1968։

16 Ս. Հ. Ավետիսյան, Մաթեմատիկական տրամաբանության հիմնական տարրերը, Երևան, 1969։

17 Г. А. Брутян, Теория познания общей семантики, Ереван, 1959. Սեմանտիկայան փիլիսոփայության քննադատական վերլուծություն, Երևան, 1962։

18 Л. А. Абрамян, Гносеологические проблемы теории знаков, Ереван, 1965.

19 Ա. Կ. Մինասյան, Մատերիայի զարգացման և փոփոխությունների թռիչքաձև բնույթը, Երևան, 1955։ Հ. Գ. Շաքարյան, Դիալեկտիկայի հիմնական օրենքները, Երևան, 1960։ Լ. Ա. Աբրահամյան, Բացասման կատեգորիան և ժամանակակից բնագիտությունը, Երևան, 1962։ Ղ. Բ. Վարդապետյան, Հնարավորության և իրականության դիալեկտիկան, Երևան, 1950։ Կ. Գ. Անանիկյան, Հնարավորության և իրականության դիալեկտիկան, Երևան, 1960։ Հ. Գ. Գաբրիելյան, Ձևի և բովանդակության դիալեկտիկան, Երևան, 1953։ Վ. Խ. Բաղդասարյան, Պատճառ և նպատակ, Երևան, 1966։

20 В. Г. Осипова, О природе софистики, Ереван, 1964.

21 «Философские вопросы логического анализа научного знания», Ереван, 1969.

Պետք է ասել, որ մինչև վերջին տարիներս Հանրապետության փիլիսոփաները գրեթե չէին զբաղվում բնագիտության նվաճումների փիլիսոփայական ընդհանրացման խնդիրներով։ Այժմ արդեն այս բնագավառում ևս որոշակի է տեղաշարժը։ Հրապարակվել են մի շարք հոդվածներ, բրոշյուրներ ու գրքեր, որտեղ մեկնաբանվում են բնագիտության փիլիսոփայական պրոբլեմներ։ Դրանցից են Ս. Ավետիսյանի[22], Ա. Մինասյանի[23] և Լ. Աբրահամյանի[24] աշխատությունները։

Պատմական մատերիալիզմի հարցերը սկսած 1920—1930-ական թթ. եղել են հայ փիլիսոփաների ուշադրության մշտական առարկան։

Պատմական մատերիալիզմի շատ ընդհանուր սկզբունքներ են քննարկվում ու լուսաբանվում Խ. Մոմջյանի «Լաֆարգը և մարքսիստական տեսության մի քանի հարցերը» մենագրության մեջ[25], որտեղ նշանավոր ֆրանսիական մտածողի աշխարհայացքի տարբեր կողմերի բացահայտման հետ միասին քննադատվում են նաև բնության ու հասարակության բազմաթիվ երևույթների վերաբերյալ հակամարքսիստական ըմբռնումները։

Մի շարք հետազոտություններ են նվիրվել պատմական մատերիալիզմի այնպիսի կարևոր հարցի լուսաբանմանը, ինչպիսին է պատմության մեջ ժողովրդական մասսաների և անհատի դերի հարցը։ Սոցիալիզմի կառուցման գործում ժողովրդական մասսաների աճող դերը բացահայտված է Խ. Մոմջյանի աշխատանքում[26], պատմության մեջ ժողովրդական մասսաների և անհատի դերի վերաբերյալ մարքսիստական սկզբունքներն են շարադրվում ու լուսաբանվում Ղ. Վարդապետյանի և Հ. Խտրյանի գործերում[27]։

Ազատության և անհրաժեշտության պրոբլեմն արծարծվում է Հ. Ասլանյանի աշխատանքում. այստեղ քննադատվում են վոլյունտարիզմն ու ֆատալիզմը, քննարկվում են իրադարձությունների օբյեկտիվ ընթացքի և մարդկային կամքի դերի փոխհարաբերության դիալեկտիկական լուծման քաղաքական նշանակության և այլ հարցեր։ Անդրադառնալով ազատության և անհրաժեշտության հարցին, Գ. Մխիթարյանը հատկապես ծանրանում է ազատության և անհրաժեշտության դիալեկտիկայի դրսևորման առանձնահատկությունների վրա սոցիալիստական հասարակության պայմաններում[28]։

---

22 Ս. Հ. Ավետիսյան, Տարածության և ժամանակի պրոբլեմը հարաբերականության տեսության լույսի տակ, Երևան, 1963։ Նույնի՝ Մաթեմատիկան և իրականությունը, Երևան, 1966։

23 А. К. Минасян, Переход количественных изменений в качественные в неорганической природе, Ереван, 1958. Նույնի՝ Թռիչքների դրսևորման մի քանի առանձնահատկությունները անօրգանական բնության մեջ, Երևան, 1961։

24 Л. А. Абрамян, Сигнал и условный рефлекс, Ереван, 1961.

25 Х. Н. Момджян, Лафарг и некоторые вопросы марксистской теории, Ереван, 1954.

26 Х. М. Момджян, Социалистическое общество и творческая активность народных масс, Ереван, 1954.

27 Ղ. Բ. Վարդապետյան, Մասսաների և անհատի դերը պատմության մեջ, Երևան, 1954։ Հ. Կ. Խտրյան, Ժողովրդական մասսաների և անհատի դերը պատմության մեջ, Երևան, 1960։

28 Հ. Ասլանյան, Մարքսիզմ-լենինիզմը անհրաժեշտության և ազատության մասին (Հայկ. ՍՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորի աշխատություններ, հատ. 1, Երևան, 1950), Գ. Մ. Մխիթարյան, Ազատություն և անհրաժեշտություն, Երևան, 1963։

Բարոյագիտության հարցերի լուսաբանմանն են նվիրված Ղ. Վարդապետյանի և Մ. Դանիելյանի աշխատությունները[29], որոնցից առաջինը բարոյագիտության մարքս-լենինյան ուսմունքի սիստեմատիկ շարադրանք է, երկրորդում՝ դրա հետ միասին նաև քննադատորեն վերլուծվում են բարոյականության իդեալիստական և մետաֆիզիկական ըմբռնումները։ Քննվում են նաև բարոյագիտության առարկայի և նրա առանձնահատկությունների, բարոյագիտության և հասարակական գիտակցության մյուս ձևերի փոխհարաբերության հարցեր։

Հասարակության կյանքում աշխարհագրական միջավայրի դերի վերաբերյալ մարքսիստական հայացքների ու այդ հարցի պատմության շարադրանքը և բուրժուական սոցիոլոգիայում արտահայտվող աշխարհագրական դետերմինիզմի ուղղության քննադատությունն է տրվում Ա. Ոսկանյանի աշխատանքում[30]։ Մարդու և բնության հարաբերության ընդհանուր պրոբլեմի վերլուծությանն է նվիրված Ս. Թովմասյանի աշխատությունը[31], որի մեջ առանձին տեղ է տրվում աշխատանքի գործիքների՝ որպես աշխատանքային պրոցեսների իրականացման միջոցների վերլուծությանը։

Հայ փիլիսոփաների հետազոտություններում զգալի տեղ են բռնում սոցիալիզմի՝ որպես հասարակական-տնտեսական ֆորմացիայի հիմնական գծերի զարգացման և կոմունիզմին անցնելու օրինաչափությունների պրոբլեմները։

Կոմունիստական տնտեսության լինելության դիալեկտիկային են նվիրված Կ. Բոստանջյանի աշխատանքները[32]։ Նույն պրոբլեմի շուրջը գրքեր են հրատարակել նաև Ռ. Վարդանովը[33], Հ. Խտրյանը[34] և ուրիշներ։ Փիլիսոփաները, սակայն, հետաքրքրել են սոցիալիզմի ոչ միայն տնտեսական հիմքերի հետ կապված հարցերը, այլև դրանց բազայի վրա առաջացող հակասությունների ու դրանց հաղթահարման ուղիների հարցերը, ինչպես և սոցիալիզմի պայմաններում հասարակական գիտակցության ձևերի և գիտության զարգացման յուրահատկություններն ու օրինաչափությունները։ Պրոֆ. Հ. Գաբրիելյանի աշխատության մեջ[35] փորձ է արվում դասակարգել սոցիալիստական հասարակարգի հակասությունները և ցույց տալ դրանց հաղթահարելու ձևերն ու եղանակները սոցիալիստական վերափոխումների տարբեր փուլերում։ Իր ծավալուն մենագրության էջերում սոցիալիստական հասարակարգում գիտության զարգացման պայմաններին և առանձնահատկություններին է անդրա-

---

29 Ղ. Բ. Վարդապետյան, *Մարքսիզմ-լենինիզմը բարոյականության մասին, Երևան, 1956։* М. С. Даниелян, Некоторые вопросы марксистско-ленинской этики, Ереван, 1962.

30 А. М. Восканян, О роли географической среды в развитии общества, Ереван, 1956.

31 С. С. Товмасян, Труд и техника, Ереван, 1965.

32 Կ. Մ. Բոստանջյան, *Սոցիալիստական տնտեսակարգի հիմնական գծերը, Երևան, 1958։* Նույնի՝ Диалектика становления коммунистического способа производства, М., 1967.

33 Р. Г. Вартанов, Диалектика развития социализма, Ереван, 1964.

34 Հ. Կ. Խտրյան, *Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը, Երևան, 1962։*

35 Г. Г. Габриелян, Противоречия социалистического общества и пути преодоления, Ереван, 1962.

դարձել Ա. Թելունցը[36]։ Մարդկային հասարակության զարգացման մեջ, մասնավորապես կոմունիզմի կառուցման ժամանակ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների փոխհարաբերության հարցին է նվիրված Մ. Անտոնյանի աշխատանքը[37]։

Վերջին տարիներս ինչպես ողջ Սովետական Միության, այնպես էլ մեր հանրապետության բուհերում դասավանդվում է «Գիտական կոմունիզմի հիմունքներ» առարկան։ Այդ կապակցությամբ հրատարակվել է Կ. Անանիկյանի աշխատությունը[38], ինչպես նաև մի կոլեկտիվ աշխատանք, որը հայերեն լեզվով առաջին ուսումնական ձեռնարկն է՝ ստեղծված Երևանի պետական համալսարանի գիտական կոմունիզմի ամբիոնի անդամների ջանքերով[39]։

Մի շարք հետազոտություններ են հրապարակվել ազգային հարցի վերաբերյալ։ Դրանցից Մ. Մելիքյանի մենագրությունը նվիրված է հայ ազգի ձևավորման և նրա սոցիալիստական վերափոխման խնդրին[40]։ Մի այլ ուսումնասիրության մեջ[41] Մ. Մելիքյանը անդրադառնում է ցեղի, ժողովրդի և ազգի՝ որպես մարդկանց ընդհանրության պատմական ձևերի մարքսիստական ըմբռնմանը։ Սիրո և ընտանիքի հետ առնչվող տեսական խնդիրներին է նվիրված Ա. Ադոյանի աշխատությունը[42]։ Կուլտուրայի տեսության հարցը ուսումնասիրվում է Է. Մարգարյանի աշխատության[45] մեջ։

Հանրապետության փիլիսոփաները անդրադարձել են նաև աթեիզմի հիմնավորման, կրոնի և եկեղեցու, կրոնական բարոյականության քննադատության խնդիրներին[44]։ Հրապարակված աշխատանքները հիմնականում հետապնդել են մասսաների գիտակցականության, գիտական աշխարհայեցողության բարձրացման, նրանց կոմունիստական բարոյականության ոգով դաստիարակելու դաստիարակչական-քաղաքական նպատակներ։

Սիստեմատիկ հետազոտական աշխատանքներ են տարվել նաև էսթետիկայի բնագավառում։ Մարքս-լենինյան գեղագիտական հիմունքները լուսաբանելու և մասսայականացնելու ասպարեզում կգալի ավանդ ունեն հայ մարք-

---

36 А. М. Телунц, Условия и особенности развития науки в социалистическом обществе, Ереван. 1963.

37 М. О. Антонян, Соотношение объективных условий и субъективного фактора при социализме, Ереван, 1961.

38 Կ. Գ. Անանիկյան, Գիտական կոմունիզմի առաջացումն ու զարգացումը, Երևան, 1965։

39 Տե՛ս «Գիտական կոմունիզմ», ուսումնական ձեռնարկ, Երևան, 1966։

40 М. А. Меликян, К вопросу о формировании армянской нации и ее социалистическом преобразовании, Ереван, 1957.

41 Մ. Ա. Մելիքյան, Ցեղը, ժողովուրդը, ազգը որպես մարդկանց ընդհանրության պատմական ձևեր, Երևան, 1960։

42 Ա. Գ. Ադոյան, Սիրո և ընտանիքի էվոլյուցիան, Երևան, 1967։

43 Э. С. Маркарян, Очерки теории культуры, Ереван, 1969.

44 Զ. Բ. Վարդապետյան, Կոմունիստական բարոյականության մասին, Երևան, 1954։ Նույնի՝ Կրոնը որպես հասարակական գիտակցության ձև, Երևան, 1960։ Ն. Մ. Գասպարյան, Գիտության և կրոնի հակադրությունը, Երևան, 1955։ Նույնի՝ Մարքսիստական աթեիզմը աթեիզմի բարձրագույն ձևն է, Երևան, 1960։ Վ. Զ. Սկյան, Կոմունիստական և կրոնական բարոյականության հակադրությունը, Երևան, 1959։ Նույնի՝ Կրոնը որպես հասարակական գիտակցության ձև, Երևան, 1960։ Թ. Ա. Իսայան, Կոսմոգոնիան ընդդեմ կրոնի, Երևան, 1960։ Նույնի՝ Քրիստոնեական սոցիալիզմի ռեակցիոն էությունը, Երևան, 1962։

սիստների ավագ սերնդի ներկայացուցիչները՝ Պ. Մակինցյանը, Հ. Գյուլիքեվխյանը, Ց. Խանղադյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ։

Էսթետիկայի հարցերի հետազոտությունները ավելի մեծ թափ ու ծավալ ստացան վերջին երեք տասնամյակում։ Հրատարակվել են ուսումնասիրություններ՝ նվիրված արվեստի ստեղծագործությունների գնահատման օբյեկտիվ չափանիշների[45], արվեստի ճանաչողական նշանակության[46] և գեղեցիկի ըմբռնման ու իրականության հետ ունեցած փոխհարաբերության[47] հարցերին։ Ուսումնասիրվել է բուրժուական աշխարհում լայն տարածում գտած աբստրակցիոնիզմի սոցիալական էությունը, բացահայտվել են նրա տեսական-գաղափարական հիմքերն ու առնչությունները[48]։ Հրատարակվել է էսթետիկայի հարցերին նվիրված ժողովածու[49]։ Սկիզբ է դրվել հայ էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրությանը և այդ բնագավառում այսօր արդեն կան շոշափելի արդյունքներ։ Այդ են վկայում միջնադարյան Հայաստանի էսթետիկական մտքին[50], Նալբանդյանի[51], Պարոնյանի[52], Պալասանյանի[53], Շիրվանզադեի[54] և հայ մյուս անվանի ստեղծագործողների էսթետիկական հայացքներին նվիրված աշխատությունները։

Բուրժուական փիլիսոփայական հոսանքների քննադատությանն են նվիրված Դ. Բրուտյանի մի շարք աշխատությունները[55]։ Նա վերլուծության է ենթարկել մասնավորապես սեմանտիկական իդեալիզմը։ Բուրժուական պատմության փիլիսոփայությունը քննադատվում է Հ. Ասլանյանի գրքում[56], որտեղ քննության են առնվում հասարակական առաջադիմության վերաբերյալ ժամանակակից բուրժուական կոնցեպցիաները։ Ընդգրկելով փաստական հարուստ ու բազմազան նյութ, հեղինակը շարադրում է նաև հասարակական առաջադիմության մասին եվրոպական և ռուսական առաջավոր մտածողների տեսակետները։ Բուրժուական սոցիոլոգիական ուսմունքների քննադատությանն է նվիրված նաև լոկալ քաղաքակրթության կոնցեպցիայի վերաբերյալ է. Մար-

---

45 С. С. Товмасян, К вопросу об объективных критериях оценки произведений искусства, Ереван. 1965.

46 Я. И. Хачикян, О познавательном значении искусства, Ереван, 1959.

47 *Ա. Լ. Քալանթար, Գեղեցիկի հարցի շուրջը, Երևան, 1964։*

48 *Յա. Ի. Խաչիկյան, Ինչ է աբստրակցիոնիզմը, Երևան, 1961։ Նույնի՝* Абстракционизм и художественное познание, Ереван, 1968.

49 *«Էսթետիկայի հարցեր», Երևան, 1967։*

50 А. А. Адамян, Эстетические воззрения средневековой Армении (период раннего феодализма), Ереван, 1955.

51 *Ա. Տերտերյան, Նալբանդյանի էսթետիկան, Երևան, 1939։ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանի էսթետիկան, Երևան, 1956։ Ժ. Ստեփանյան, Նալբանդյանի էսթետիկական հայացքները, Երևան, 1967։*

52 *Ա. Տերտերյան, Հ. Պարոնյանի էսթետիկական հայացքները, Երևան, 1941։*

53 *Ս. Ս. Թովմասյան, Ստ. Պալասանյանի էսթետիկական հայացքները, Երևան, 1959։*

54 *Ս. Լ. Թոփչյան, Շիրվանզադեի էսթետիկան, Երևան, 1963։*

55 *Դ. Ա. Բրուտյան, Արդի ամերիկյան բուրժուական փիլիսոփայության ռեակցիոն էությունը, Երևան, 1954։ Նույնի՝* Теория познания общей семантики, Ереван. 1959։ *Նույնի՝ Սեմանտիկյան փիլիսոփայության քննադատական վերլուծություն, Երևան, 1962։*

56 Г. Г. Асланян, Идея прогресса в буржуазной философии истории, Ереван, 1965.

գարյանի գիրքը[57]։ Տ. Ա. Ալեքսանյանը[58] անդրադարձել է ժամանակակից բուրժուական փիլիսոփայական և սոցիոլոգիական հիմնական ուղղությունների քննադատությանը։ Բուրժուական փիլիսոփայության և արվեստագիտության մեջ իռացիոնալիզմի քննադատությանն է նվիրված Ա. Կարապետյանի գիրքը[59]։ Ս. Ալահվերդյանի աշխատանքում[60] քննադատվում է ժամանակակից բուրժուական գաղափարախոսության մոդայական ուղղություններից մեկը՝ այսպես կոչված էմպիրիստական սոցիոլոգիան, և բացահայտվում են նրա տեսական ու պատմա-փիլիսոփայական ակունքները։

Հայ փիլիսոփաները չեն թևանցել նաև մի այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է ժամանակակից ռևիզիոնիզմի փիլիսոփայական սկզբունքների բացահայտումն ու մերկացումը։ Այդ հարցերին են վերաբերում Վ. Սկյանի[61], Ռ. Վարդանովի[62], Ս. Ղազարյանի[63] աշխատությունները։

Վերջին երեք տասնամյակների ընթացքում սիստեմատիկ ուսումնասիրության առարկա է դարձել հայ փիլիսոփայական մտքի պատմությունը։ Գրվել են մի շարք մենագրություններ ու հոդվածներ՝ նվիրված հին և նոր ժամանակների հայ նշանավոր մտածողների փիլիսոփայական, հասարակական-քաղաքական, տրամաբանական, էսթետիկական ու էթիկական հայացքների քննական վերլուծությանը։ Հրատարակվել են հայ փիլիսոփայության պատմության առանձին փուլերն ու ամբողջ պատմությունն ընդգրկող ծավալուն աշխատություններ։ Լուրջ քայլեր են արվել հայ փիլիսոփայության պատմության հետ առնչվող այնպիսի կարևոր հարցերի լուսաբանման ուղղությամբ, ինչպիսիք են նրա պարբերացումը, հիմնական ուղղություններն ու հոսանքները, հարևան ժողովուրդների փիլիսոփայական մտքի հետ ունեցած կապերն ու փոխազդեցությունները և այլն։

Առաջին մենագրական աշխատանքներից մեկը, որ բացահայտում էր հայ փիլիսոփայության պատմության նշանավոր մի էջ, նվիրված էր V դարի մտածող Եղնիկ Կողբացուն[64]։ Այստեղ «Եղծ աղանդոց» աշխատության ընձեռած նյութերի հիման վրա Վ. Չալոյանը լուսաբանում է քրիստոնեական կրոնի դիրքերից զրադաշտական կրոնի դեմ Եղնիկի մղած գաղափարական պայքարի փիլիսոփայական ու քաղաքական իմաստը։

Հաջորդ մենագրության մեջ Վ. Չալոյանը շարադրում է V—VI դդ. մեծանուն փիլիսոփա Դավիթ Անհաղթի ուսմունքը[65], միաժամանակ մի առանձին գլխում ի մի է բերում Դավիթ Անհաղթի կյանքի ու ժառանգության շուրջը հայ և օտար հետազոտողների արտահայտած տեսակետները։ Շարադրելով ու վեր-

---

57 Э. С. Маркарян, О концепции локальных цивилизаций, Ереван, 1962.

58 Տ. Ա. Ալեքսանյան, Սոխիզմը և ժամանակակից բուրժուական փիլիսոփայությունը, Երևան, 1959։ Նույնի՝ Ժամանակակից բուրժուական սոցիոլոգիան, Երևան, 1965։

59 Ա. Ա. Կարապետյան, Իռացիոնալիզմը փիլիսոփայության և արվեստագիտության մեջ, Երևան, 1955։

60 С. Д. Аллахвердян, Неопозитивизм в современной социологии, Ереван, 1964.

61 Վ. Ղ. Սկյան, Ընդդեմ ռևիզիոնիզմի պետության հարցում, Երևան, 1960։

62 Р. Г. Вартанов, Ревизионизм и современность, Ереван, 1959.

63 Ս. Հ. Ղազարյան, Փիլիսոփայական ռևիզիոնիզմի դեմ, Երևան, 1961։

64 В. К. Чалоян, К вопросу об учении Езника Кохбаци—армянского философа пятого века, Ереван, 1940.

65 В. К. Чалоян, Философия Давида Непобедимого, Ереван, 1945.

լուծելով Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքները և բացահայտելով դրանց կապը անցյալի ու իր ժամանակի փիլիսոփայական ուսմունքների հետ, Վ. Զալոյանը ցույց է տալիս, որ նա մեծ ազդեցություն է գործել միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա։

Միջնադարյան հայ ականավոր մտածողների փիլիսոփայական հայացքների և ընդհանրապես աշխարհայեցողության բացահայտմանն ու լուսաբանմանը նվիրված մենագրություններից պետք է հիշատակել Գ. Խրլոպյանի աշխատանքը VII դարի խոշոր գիտնական Անանիա Շիրակացու աշխարհայեցողության[66] մասին, Գ. Գրիգորյանի ուսումնասիրությունները՝ նվիրված XII դարի նշանավոր գիտնական ու փիլիսոփա Հովհաննես Իմաստասերին[67], XIII դարի աշքի ընկնող մտածողներ ու հասարակական գործիչներ Հովհաննես Երզնկացուն[68] և Վահրամ Բաբունուն[69], Ս. Արևշատյանի հետազոտությունը՝ XIV դարի մեծանուն մտածող ու ուսուցիչ, բազմաթիվ մեծածավալ աշխատությունների հեղինակ Գրիգոր Տաթևացու[70] վերաբերյալ և այլն։ Այս մենագրություններում հիմնականում Մատենադարանում պահվող ձեռագիր, դեռևս գերազանցապես չօգտագործված, նյութերի ուսումնասիրության հիման վրա վերլուծության են ենթարկվում միջնադարյան վերոհիշյալ մատենագիրների օնտոլոգիական-բնագիտական, իմացաբանական ու հոգեբանական, էթիկական ու էսթետիկական և սոցիալ-քաղաքական ըմբռնումները, բացահայտվում են նրանց աշխարհայեցողության առաջավոր կողմերն ու տենդենցները և ցույց է տրվում նրանց տեղն ու դերը հայ փիլիսոփայական մտքի զարգացման մեջ։

Մենագրություններ են գրվել նաև նոր ժամանակների (XVIII—XX դդ.) հայ նշանավոր հասարակական գործիչների ու մտածողների փիլիսոփայական ու հասարակական-քաղաքական հայացքների վերաբերյալ։ Լուսաբանվել են XVIII դ. հայ ազատագրական շարժման գործիչներ Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի հայացքները, բացահայտվել ու բնութագրվել է նրանց ազատագրական գաղափարախոսության բուրժուա-լուսավորական բովանդակությունն ու էությունը[71]։

XIX դարի հայ մտածողներ ու հասարակական գործիչներ Մեսրոպ Թաղիադյանին[72], Անտոն Դարագաշյանին[73], Գալուստ Կոստանդյանին[74], Միքայել Նալբանդյանին, Արսեն Բաղրատունուն[75], Ստ. Նազարյանին[76], Նահապետ Ռու-

---

66 Գ. Տ. Խ ր լ ո պ յ ա ն, Անանիա Շիրակացու աշխարհայացքը, Երևան, 1964։

67 «Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները» («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1958, № 3)։

68 Գ. Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Երևան, 1962։

69 Գ. Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն, Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը, Երևան, 1968։

70 С. С. А р е в ш а т я н, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957.

71 Գ. Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 1957։

72 Գ. Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն, Մեսրոպ Թաղիադյանի հասարակական-քաղաքական հայացքները (XIX դ. հայ փիլիսոփայական մտքի պատմությունից), Երևան, 1969։

73 Ա. Մ. Թ ա դ ե ւ ո ս յ ա ն, Ա. Դարագաշյանի փիլիսոփայական և տրամաբանական հայացքները, Երևան, 1962։ Հ. Գ. Շ ա ք ա ր յ ա ն, Գարագաշյանի աշխարհայացքը, Երևան, 1962։

74 Հ. Գ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն, Գալուստ Կոստանդյան, Երևան, 1946։

75 Ա. Մ. Թ ա դ ե ւ ո ս յ ա ն, Արսեն Բաղրատունին որպես փիլիսոփա («XIX դ. հայ փիլիսոփայական մտքի պատմությունից»), Երևան, 1969։

76 Ռ. Ա. Գ ա ր ա պ ե տ յ ա ն, Ստեփանոս Նազարյանցի աշխարհայացքը (նույն տեղում)։

սինյանին[77] և շատ ուրիշների նվիրված մենագրություններում մարքս-լենինյան փիլիսոփայության դիրքերից լուսաբանվել ու գնահատվել են նրանց հայացքները ժամանակի հայ հասարակությանը հուզող տեսական ու գործնական բազմաթիվ հարցերի և հատկապես փիլիսոփայական պրոբլեմների շուրջը։

Առանձին աշխատություն է գրվել նաև XIX դ. առաջին կեսի փիլիսոփայական մտքի վերաբերյալ[78], որտեղ հեղինակը բացահայտում է մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի առանձնահատկությունները և նոր աշխարհայեցողության ձևավորումը XIX դարի առաջին կեսի հայ իրականության մեջ՝ ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ հայ գաղթօջախներում։ XIX դարի հասարակական մտքի լուսաբանմանը նվիրված աշխատանքների շարքում ուշագրավ է հատկապես Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը»[79] հետազոտությունը, որտեղ գիտական վերլուծության են ենթարկվում ու գնահատվում ոչ միայն Նալբանդյանի, այլև XIX դարի բազմաթիվ հայ գործիչների ու մտավորականների հասարակական-քաղաքական հայացքներն ու ազգային-ազատագրական ծրագրերը և տրվում է դրանց գնահատականը։ XIX դարի գործիչների հասարակական-քաղաքական հայացքները լուսաբանվել են նաև հասարակական այլ գիտությունների ներկայացուցիչների՝ պատմաբանների, գրականագետների, լեզվաբանների և այլոց աշխատություններում։ Լուսաբանվել են նաև հայ իրականության մեջ մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման հարցերը։ Մի շարք ուսումնասիրություններ են հրատարակվել հայ մարքսիստների և Լենինի զինակիցների մասին[80]։

Հայ փիլիսոփայության պատմության մասսայականացման ու գիտական վերլուծության տեսակետից մեծ նշանակություն ունի անցյալի փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչների աշխատությունների գիտական հրատարակության, հատկապես միջնադարյան հայ փիլիսոփայության հուշարձանների հրատարակման գործը (ինչպես աշխարհաբար, այնպես էլ ռուսերեն թարգմանությամբ)։ Այս ասպարեզում, որը զգալի դժվարությունների հաղթահարման հետ է կապված, նույնպես արդեն կան նվաճումներ։ Առ այսօր հրապարակվել են Եզնիկ Կողբացու[81], Դավիթ Անհաղթի[82], Հովհան Որոտնե-

77 Ա. Մ. Թևոսյան, Նահապետ Ռուսինյանի աշխարհայացքը, Երևան, 1970։

78 Է. Հարությունյան, Փիլիսոփայական միտքը Հայաստանում XIX դ. առաջին կեսում, Երևան, 1965։

79 Ա. Գ. Հովհաննիսյան, Նալբանդյանն ու նրա ժամանակը, հատ. 1 և 2, Երևան, 1955, 1956։

80 Լ. Ա. Աբրահամյան, Ս. Սպանդարյանը պրոլետարական ինտերնացիոնալիզմի ջատագով և պրոպագանդիստ, Երևան, 1956։ Я. И. Хачикян, Борьба Шаумяна за марксистское понимание роли народных масс в истории, Ереван, 1956. Տ. Պ. Ալեքսանյան, Ս. Շահումյանը որպես մարտնչող մատերիալիստ, Երևան, 1957։ Г. С. Агаджанян, Вопросы марксистско-ленинской теории в трудах Шаумяна, Ереван, 1958. Ա. Գ. Բարախանյան, Պատմական մատերիալիզմի մի քանի հարցեր Ստ. Շահումյանի աշխատություններում, Երևան, 1958։ Ն. Մ. Դասպարյան, Ստ. Շահումյանը որպես ականավոր թեորետիկ և մարքսիզմի պրոպագանդիստ, Երևան, 1960 և այլն։

81 Езник Кохбаци, Книга опровержений, Ереван, 1968.

82 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960։ Դավիթ Անհաղթ, Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտելի, Երևան, 1967։ Համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը դրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի։

ցու[83], Վահրամ Բաբունու[84], Գալուստ Կոստանդյանի[85] աշխատությունները, ինչպես և միջնադարյան Հայաստանի մտավոր-կուլտուրական կենտրոններում լայն ճանաչում գտած Արիստոտելի «Կատեգորիաների» անանուն մեկնություններ[86]։ Բնագրերի հրատարակման գործում եռանդուն նախաձեռնություն է հանդես բերում Մաշտոցի անվան Մատենադարանը։

Հետազոտությունների այս փուլում արդեն, երբ դեռևս բավականաչափ անելիքներ կան նյութերի վերհանման և ուսումնասիրության, առանձին մտածողների հայացքների ամբողջական բացահայտման ու գնահատման և փոխադրեցությունների հարցերը պարզելու ուղղությամբ, փորձ է կատարվել նաև շարադրելու հայ փիլիսոփայական մտքի պատմությունը։ Վ. Չալոյանի մենագրությունը[87] ընդգրկում է հայ փիլիսոփայության պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև XVIII դ. ներառյալ, իսկ Հ. Գաբրիելյանինը[88]՝ հայ փիլիսոփայական մտքի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Հ. Գաբրիելյանը իր աշխատանքի վերջին՝ IV հատորում բնութագրում է նաև XX դարի հայ քաղաքական հոսանքները, ըստ որում առանձին գլուխներ են նվիրված հայ մարքսիստական մտքի զարգացմանը՝ մինչև սովետական կարգերի հաստատումը և դրանից հետո, նաև մատերիալիզմի և իդեալիզմի պայքարին սփյուռքահայ մտավորականության միջավայրում։ Սովետական Հայաստանի (1920 թ. մինչև 1960 թ.) փիլիսոփաների ու նրանց հրատարակած աշխատանքների մասին առավել մանրամասն գրել է Ն. Գասպարյանը[89]։ Վերջապես հրատարակվել է նաև Հ. Գաբրիելյանի «Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն» աշխատությունը[90]։

Հայ փիլիսոփաներին հետաքրքրել է նաև փիլիսոփայության ընդհանուր պատմությունը։ XVIII դարի ֆրանսիական նշանավոր մատերիալիստ փիլիսոփա Հելվեցիուսի մասին ծավալուն ուսումնասիրություն է գրել Խ. Մոմջյանը[91]։ Ուսումնասիրություններ են գրվել Լ. Ֆոյերբախի կյանքի ու աշխարհայեցողության[92], Է. Կանտի փիլիսոփայության[93] մասին։ Առանձին ուսումնասիրություն է հրատարակվել՝ նվիրված հեգելյան փիլիսոփայական դպրոցի քայքայմանը

---

83 «Հովհաննու Որոտնեցւոյ վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի»։ Հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Կ. Չալոյանի, թարգմ. ռուսերենի Ա. Ա. Աղամյանի և Վ. Կ. Չալոյանի, Երևան, 1956։

84 Վահրամ Բաբունի, Լուծմունք «Ստորոգութեանցն» Արիստոտէլի, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Դ. Հ. Գրիգորյանի, Երևան, 1967։

85 Գալուստ Կոստանդյան, Մեթոդի վրա, Երևան, 1961։

86 «Անանուն մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի։ Առաջաբանը և խմբագրությունը Վ. Կ. Չալոյանի, թարգմանությունը գրաբարից ռուսերեն Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1961։

87 В. К. Чалоян, История армянской философии. Ереван, 1959.

88 Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ I—IV, Երևան, 1956—1965։

89 Ն. Մ. Գասպարյան, Փիլիսոփայական միտքը Սովետական Հայաստանում, Երևան, 1963։

90 Հ. Գ. Գաբրիելյան, Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն, Երևան, 1966։

91 Х. Н. Момджян, Философия Гельвеция. М., 1955.

92 Ա. Գ. Ադոյան, Լ. Ֆոյերբախի կյանքը և աշխարհայացքը, Երևան, 1959։

93 А. А. Карапетян, Критический анализ философии Канта, Ереван, 1958.

և Ֆոյերբախի փիլիսոփայության լուսաբանմանը[94]։ Նշանակալի չափով լուսաբանվել է նաև ռուսական փիլիսոփայական և հասարակական-քաղաքական առաջավոր միտքը[95]։ Առանձին աշխատություններ է գրվել Արևելքի և Արևմուտքի փիլիսոփայական մտքի կապերի[96] և «Հայկական վերածնունդ»[97] պրոբլեմի վերաբերյալ։

Հայ փիլիսոփայության պատմության գանագան հարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև մի շարք անվանի հայ պատմաբաններ ու գրականագետներ (Մ. Աբեղյան, Ա. Գ. Հովհաննիսյան և ուրիշներ)։

---

94 Ա. Ա. Կարապետյան, Հեգելի փիլիսոփայական դպրոցի քայքայումը և Ֆոյերբախը, Երևան, 1958։

95 Հ. Գ. Ասլանյան, Ռուս կլասիկ փիլիսոփայության բնութագրության շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, № 9։ Նույնի՝ Критика волюнтаризма и фатализма Н. Г. Чернышевским (նույն տեղում, 1952, № 3)։ Նույնի՝ Ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատիայի պատմա-փիլիսոփայական հայացքների մասին (նույն տեղում, 1958, № 1)։ Ղ. Բ. Վարդապետյան, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքները, Երևան, 1946։ Ռ. Ա. Կարապետյան, Չերնիշևսկու էթիկական հայացքները, Երևան, 1961։

96 В. К. Чалоян, Восток—Запад, М., 1968.

97 Վ. Կ. Չալոյան, Հայկական ռենեսանս, Երևան, 1964։ Նույնի՝ Армянский ренессанс, М., 1963.